# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գայ համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ,
Հեռ. (0231)60136 , gay.armavir@mta.gov.am

N 165
*06 օգոստոս 2018թ.*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԳԱԳԻԿ ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Միրիջանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի հուլիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. Մարկոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

03 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 34

## ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով ,<<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Անահիտ Գալստյանի 2018 թվականի հունիսի18-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Իսահակյան 2 փողոց տուն 15 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Անահիտ Սերյոժայի Գալստյանի '/ծնվ. 23.01.1952թ./, Արթուր Օթարի Գալստյանի '/ծնվ. 23.06.1974թ./ և Սերյոժա Օթարի Գալստյանի'/ծնվ.21.08.1979թ./,գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0.08 հա հողամասի և հողամասին կից ավել օգտագործըրծվող 0.010713 հա հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և օժանդակ շինության նկատմամբ՝բնակելի տուն՝ 135.20քմ կառուցված 1976թ.,ջրավազան՝3.40քմ,կառուցված 2000թ.:

Բնակելի տունը բավարարում է <<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը՝ գրանցելու Անահիտ Գալստյանի'/ծնվ.23.01.1952թ./, Արթուր Գալստյանի 'ծ/նվ.

23.06.1974թ./, Սերյոժա Գալստյանի՝ /ծնվ.21.08.1979թ./ սեփականության իրավունքը սույն որոշման առաջին կետում նշված հողամասի , հողամասում առկա բնակելի տան , օժանդակ շինության նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել Իսահակյան 2 փողոց, տուն 15 հասցեն:

5,Ուժը կորցրած ճանաչել Գայ համայնքի ղեկավարի 2018թվականի հունիսի 20-ի թիվ 31 որոշումը:

6,.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

2018 թ. օգոստոսի 7-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

09 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 35

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Հենզել Առաքելյանի 2018 թվականի հուլիսի 6-ի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Հենզել Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.5 հա, ընդհանուր մակերեսով հողատարածքին /ԿԾ 04-033-0225-0030 և ԿԾ 04-033-0225-0027/ տալ հասցե՝ Երևանյան փողոց, թիվ 44/1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2018թ. օգոստոսի 7-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 36

### ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 51-Ն որոշումը և քաղաքացի Էմին Հովհաննիսյանի 2018թվականի հուլիսի 10-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Էմին Հովհաննիսյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2018թ. օգոստոսի 7-ին
գ.Գայ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 37

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 51-Ն որոշումը և քաղաքացի Լյուդվիկ Վարդազարյանի 2018թվականի հուլիսի 10-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Քաղաքացի Լյուդվիկ Վարդազարյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2018 թ. օգոստոսի 7-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 38

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի N731-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշումների պահանջներով՝ և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Կարեն Նշանի Կարապետյանի դիմումը.

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝համայնքի Իսահակյան փողոց թիվ 4 հասցեի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.26680հա հողամասում Կարեն Նշանի Կարապետյանի՝ծնվ.1965 թ. անձ. AM0716657 տրվ. 057-ի կողմից, 25,09 քմ արտաքին չափով ինքնակամ կառուցված ծածկը և 17,10քմ օժանդակ շինությունը ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիական կյանքին ու առողջությանը:

3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին և համայնքի գլխավոր հատակագծի պահանջներին, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացրած Կարեն Նշանի Կարապետյանին՝ծնվ.1965թ անձ. AM0716657 տրվ. 057-ի կողմից, գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով գնել 25,09քմ արտաքին չափերով ինքնակամ կառուցված ծածկը 25592 /քսանհինգ հազար հինգ հարյուր իննսուներկու / դրամով և 17,10քմ օժանդակ շինությունը 29070/ քսանինը հազար յոթանասուն / դրամով:

5.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

6. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Կարեն Նշանի Կարապետյանի (ծնված 20.08.1965թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան , բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

7. Բնակելի տանը տրամադրել Իսահակյան փողոց, տուն 4 հասցեն:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

18 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 12

## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ >>պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով.

Կարգադրում եմ .

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի կարիքների համար, համայնքի կենտրոնական փողոցների ասֆալտապատման ծածկույթի փոսային վերանորոգման աշխատանքների ձեռքբերման մեկ անձ/ՄԱ/ ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել Գայի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ռիմա Գևորգյանին , իսկ գնումների համակարգող՝Գայանե Հակոբյանին:

2.Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

26 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 13

## ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Անահիտ Մկրտչյանի 2018 թվականի հուլիսի 20-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Գայի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Մկրտչյանին տրամադրել 2018 թվականի ամենամյա արձակուրդը՝ սույն թվականի օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ՝ 22 աշխատանքային օր տևողությամբ (20 աշխատանքային օր՝ նվազագույն և 2 աշխատանքային օր՝ լրացուցիչ):

2. Անահիտ Մկրտչյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի օգոստոսի 31-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
27 ՀՈՒԼԻՍԻ 2018 թվականի N 14

## ԽՈՒՐՇՈՒԴ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով.

Կարգադրում եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 100000 / մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
27 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 15

### ԱՆՆԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի "բ,, կետով.

Կարգադրում եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու համար՝ Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 173000 / մեկ հարյուր յոթանասուներեք հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 16

### ԱՆԱՀԻՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով.

Կարգադրում եմ՝

1.Աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու համար՝ Արմավիրի մարզի Գայի համայնքի ղեկավարի օգնական Անահիտ Տերտերյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 80000 / ութսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 17

## ՄԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով.

Կարգադրում եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայ համայնքի <<Մշակույթ>> միացյալ տնօրինության տնօրեն Մանյա Կարապետյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 77000 /յոթանասունյոթ հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 18

### ԽՈՒՐՇՈՒԴ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրեսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գայ համայնքի ղեկավարի2018 թվականի հունվարի 10-ի N 2 որոշումը.

Կարգադրում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին տրամադրել 2018 թվականի ամենամյա արձակուրդը սույն թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 3-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ (20 աշխատանքային օր՝ նվազագույն և 4 աշխատանքային օր՝ լրացուցիչ):

2. Խ. Քոչարյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի սեպտեմբերի 4-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ